

**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի
2023թ. հունվարի 27-ի նիստի**

Խորհրդի 41 անդամներից ներկա էին 28-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Գիտական հաղորդում «Դատախազների իրավական կրթության զարգացման հայեցակարգային ուղղությունները» (զեկ.՝ ՀՀ գլխավոր դատախազ, ԵՊՀ Քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ, ի.գ.թ. Աննա Վարդապետյան, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, ԵՊՀ Սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ, ի.գ.թ. Անահիտ Մանասյան):

2. Գիտական հաղորդում գիտական խմբագիրների եվրոպական կազմակերպության (ԳԽԵԿ)-ի՝ «Անգլերեն հրատարակվող գիտական հոդվածների հեղինակների ու թարգմանիչների համար ուղեցույցի» վերաբերյալ (զեկ.՝ ԵՊՀ Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ, ի.գ.դ., պրոֆեսոր Գևորգ Դանիելյան):

3. 2022-2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ընթացքի և արդյունքների ամփոփում:

4. Անվանական կրթաթոշակի թեկնածուների երաշխավորում:

5. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ. Գիտական հաղորդում «Դատախազների իրավական կրթության զարգացման հայեցակարգային ուղղությունները» (զեկ.՝ ՀՀ գլխավոր դատախազ, ԵՊՀ Քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ, ի.գ.թ. Աննա Վարդապետյան, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, ԵՊՀ Սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ, ի.գ.թ. Անահիտ Մանասյան):

ՀՀ գլխավոր դատախազը, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու Աննա Վարդապետյանը, կարևորելով դատախազների իրավական կրթության ոլորտում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի հետ համագործակցությունը և այդ համատեքստում անդրադառնալով Իրավագիտության ֆակուլտետի մագիստրոսական ծրագրերի վերանայման հնարավորությանը, մասնավորապես, առաջարկել է կիրառել լսարանում պրակտիկ մասնագետի և տեսաբանի համակցված աշխատանքի ձևաչափը՝ շեշտը դնելով մինչդատական և դատական փուլերում դատախազական աշխատանքի համար անհրաժեշտ հմտությունների, այդ թվում՝ փաստաթղթերի հետ աշխատանքի հմտությունների վրա:

Գլխավոր դատախազի տեղակալ, ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ Անահիտ Մանասյանն իր ելույթում, ի թիվս այլ հարցերի, ներկայացրել է դատախազների կրթության բարեփոխումների՝ ՀՀ գլխավոր դատախազության կողմից մշակվող հայեցակարգը, ինչպես նաև Դատախազության «Օրինականություն» գիտագործնական պարբերականի բարեփոխումների աշխատանքները՝ ընդգծելով, որ փոխվել են ոչ միայն տպագրվող հոդվածին ներկայացվող պահանջները, այլ նաև խմբագրական խորհրդի կազմը. այն ներկայում կազմված է միջազգային հեղինակավոր իրավաբաններից:

Գիտխորհրդի նիստում քննարկվել է նաև Դատախազության և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի միջև Փոխըմբռնման հուշագրի ստորագրման հեռանկարը, ինչպես նաև անդրադարձ է կատարվել 2023 թվականի ընթացքում՝ Հայաստանի դատախազության 105-ամյակի կապակցությամբ, համատեղ միջոցառումների կազմակերպման հնարավորությանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ի.գ.դ., պրոֆեսոր Գ.Ղազինյանը, ի.գ.դ., պրոֆեսոր Գ.Հարությունյանը, ի.գ.դ., պրոֆեսոր Ա.Վաղարշյանը, ի.գ.դ., պրոֆեսոր Ս.Դիլբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ. Գիտական հաղորդում գիտական խմբագիրների եվրոպական կազմակերպության (ԳԽԵԿ)-ի՝ «Անգլերեն հրատարակվող գիտական հոդվածների հեղինակների ու թարգմանիչների համար ուղեցույցի» վերաբերյալ (զեկ.՝ ԵՊՀ Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ, ի.գ.դ., պրոֆեսոր Գևորգ Դանիելյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ի.գ.դ., պրոֆեսոր Գ.Ղազինյանը, ի.գ.դ., պրոֆեսոր Գ.Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաղորդումն ընդունել ի գիտություն:

3. ԼՍԵՑԻՆ. 2022-2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ընթացքի և արդյունքների ամփոփում:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան, ի.գ.դ., պրոֆեսոր Հ.Խաչիկյանն ամփոփ տեղեկություններ ներկայարեց 2022-2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ընթացքի և արդյունքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ի.գ.դ., պրոֆեսոր Գ.Ղազինյանը, ի.գ.դ., պրոֆեսոր Աննա Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաղորդումն ընդունելի գիտություն:

4. ԼՍԵՑԻՆ. Անվանական կրթաթոշակների թեկնածուների երաշխավորում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Հ.Խաչիկյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնառության ընթացքում ցուցաբերած գերազանց առաջադիմությունը՝ որպես անվանական կրթաթոշակի թեկնածուներ՝ երաշխավորել հետևյալ անձանց.

1. Ստեփանյան Աննա (մագիստրատուրա, 1-ին տարի)՝ Մխիթար Գոշի անվան կրթաթոշակ.

2. Սիմոնյան Հրանտ (մագիստրատուրա, 1-ին տարի)՝ Յուրի Ղամբարյանի անվան կրթաթոշակ.

3. Ղազարյան Իգր (բակալավրիատ, 4-րդ տարի), Գևորգ Արշակյանի անվան կրթաթոշակ.

4. Մովսիսյան Էդուարդ (բակալավրիատ 3-րդ տարի)՝ ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի սահմանաձև Վլադիկ Ներսիսյանցի անվան կրթաթոշակ.

5. Սարխոսյան Ամալյա (բակալավրիատ, 3-րդ տարի)՝ Գրիգոր Զոհրապի անվան կրթաթոշակ:

5. Ընթացիկ հարցեր:

5.1. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հայցորդ Անի Զոհրաբյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել ԵՊՀ Քաղաքացիական դատավարության ամբիոնի հայցորդ Անի Զոհրաբյանի՝ «Կատարողական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04 - «Դատական իրավունք».

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., դոցենտ Սերգեյ Մեղրյանին,

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատել իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.2. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ ի.գ.դ., պրոֆեսոր Գագիկ Հարությունյանի և մյուս

համամեղինակների՝ «Սահմանադրական մշակույթի արժեքանական ակունքները հայ ժողովրդի հազարամյա տարեգրության ծալքերում» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ի.գ.դ., պրոֆեսոր Ա.Մազարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ Ի.գ.դ., պրոֆեսոր Գագիկ Հարությունյանի և մյուս համամեղինակների՝ «Սահմանադրական մշակույթի արժեքանական ակունքները հայ ժողովրդի հազարամյա տարեգրության ծալքերում» վերտառությամբ մենագրությունը երաշխավորել տպագրության:

խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

խորհրդի քարտուղար

Տ.Սուջյան